ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

Երևան
«ԱՍՈՂԻԿ»
2016

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37
Ա 597

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորմամբ

Գրախոս՝
հոգեբանական գիտությունների դոկտոր
ՌՈՒԲԵՆ ՆԱՂԴՅԱՆ

Գիտական խմբագիր՝
հոգեբանական գիտությունների թեկնածու
ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա 597 **Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր** (գիտական հոդվածների ժողովածու). - Եր.: «Ասողիկ» հրատ., 2016.- 280 էջ:

Սույն ժողովածուում ներկայացված են ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների և մագիստրոսների հոդվածները: Ժողովածուում ընդգրկվել են անձի հոգեբանության հիմնահարցերին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ: Դիտարկվում են անձի ձևավորման և կայացման գործում զարգացման, սոցիալական, մշակութային և էքզիստենցիալ խնդիրներ:

Հոդվածների ժողովածուն կարող է օգտակար լինել անձի հոգեբանության ոլորտով հետաքրքրված մասնագետների և ուսանողների համար:

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37

ISBN 978-9939-50-308-0

© Երևանի պետական համալսարան, 2016
© Խաչատրյան Ն. (խմբ.), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Նարինե Խաչատրյան
ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 9

Սվետլանա Հարությունյան
ՆԱՐԱՏԻՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 16

ԱՆՁ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Լիլիթ Գարգրցյան
ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 33

Իրինա Խանամիրյան
ԾՆՈՂԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՑԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ 42

Էլեոնորա Զաքարյան, Մարինե Միքայելյան
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 49

Սոսե Խաչիբաբյան
ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 61

Մանե Տոնոյան
ԾԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 68

Կարինե Հարությունյան
ՆԿԱՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՊԱՏԿԵՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 77

Արմինե Հայրապետյան, Լիլիթ Գարգրցյան
ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 84

ԱՆՁ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Աննա Հակոբջանյան
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 97

Լիանա Սարգսյան, Սվետլանա Հարությունյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 113

Լիլիթ Ավետիսյան, Սոնա Մանուսյան
ԿԱՄԱՎՈՐԻ ՕԳՆՈՂԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՁԻ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ 128
Քնարիկ Առաքելյան
ԱՆՁԻ ԶՈՀԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 145
Մարիաննա Գևորգյան, Նարինե Խաչատրյան
ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 153
Անժելա Աֆյան, Նարինե Խաչատրյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 163

ԱՆՁ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Սոնա Մանուսյան
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ 179
Նվարդ Գրիգորյան, Աննա Հակոբջանյան, Մերի Գրիգորյան
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐ 193
Աստղիկ Սերոբյան
ԱՆՁՆԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ԱՈՒՏՈԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ, ՀՈՒՅՆԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 210
Անուշ Մկրտչյան
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ 227
Անի Մովսիսյան, Նարինե Խաչատրյան
ՈՐՈՇ ԱՆՁՆԱՅԻՆ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՆՑԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 238

ԱՆՁ ԵՎ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Լուսինե Աղաբեկյան
ՄԱՀՎԱՆ ՀԵՏ ԲԱԽՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ 257
Նարինե Ադամյան, Իրինա Խանամիրյան
ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻ ԱՐԺԵԻՄԱՍՏԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 263
Կարինե Գրիգորյան
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՎԱԽԻ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱՆ. ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 273

ՆԱՐԱՏԻՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սվետլանա Հարությունյան

Նարատիվ[1] հոգեբանություն. ակունքները և զարգացումը

Նարատիվ հոգեբանությունը՝ որպես հատուկ ուղղություն, սկսել է զարգանալ 20-րդ դարի երկրորդ կեսին: Այն ձևավորվել է նույն հայեցակարգային մոտեցման շրջանակներում, ինչ և պոզիտիվ հոգեբանությունը: Հետդասական մոտեցումը ներկայացնող տարբեր գիտնականների աշխատանքներում հոգեբանական երևույթների նարատիվ վերլուծության խնդիրը դարձել է ուսումնասիրության առարկա [9, 10, 11, 23, 24, 29, 33]:

Մինչ նարատիվ հոգեբանության ձևավորման քննարկմանն անցնելը, անհրաժեշտ է պարզաբանել նարատիվ հասկացության էությունը: Հետմոդեռնիզմի հանրագիտարանում նարատիվը (լատ. narrar նշանակում է լեզվական գործողություն, այսինքն՝ բառային շարադրանք, ի տարբերություն պատկերացման) սահմանվում է որպես հետմոդեռնիզմի փիլիսոփայության հասկացություն, որով ինքնիրականացման գործընթացն ամրագրվում է որպես պատմողական տեքստի ինքնատիպ գոյության միջոց [6]:

Մեր կարծիքով՝ նարատիվի ակունքները պետք է փնտրել լեգենդների, առասպելների, առակների առկայության փաստի մեջ, որոնք ձևավորում, կազմակերպում և ուղղորդում էին մարդկանց կյանքը: Սակայն մեր նպատակը նարատիվի զարգացման ժամանակագրական ուսումնասիրությունը չէ, այլ, ավելի շուտ, նարատիվի դերի և նշանակության ուսումնասիրումը հոգեբանության մեջ:

Նարատիվ հոգեբանության ակունքներին անդրադառնալով՝ պետք է նշել փիլիսոփայական և գրական հայեցակարգերի մասին: Կարևոր հիմք

[1] *Նարատիվ* (անգլ. narrative — «պատմություն», narrate՝ պատմել, շարադրել բառից): Այս հասկացությունն արդի հոգեբանությանն է անցել տեքստերի վերլուծության գրականագիտական ոլորտներից և, մասնավորապես, նշանակում է հյուսվող, շարադրվող պատմություն, պատմվածքը՝ որպես պատմելու գործընթացի արդյունք: Հասկացությունն այսօր անձի հոգեբանության, ինչպես նաև մշակութային մարդաբանության, ազգագրագիտության, կոգնիտիվ գործընթացների հոգեբանական ուսումնասիրման կենտրոնական թեմաներից մեկն է՝ համարվելով անձի ամբողջական կոգնիտիվ կառույցների և ինքնագիտակցության կարևոր մեխանիզմ: Այն տարբերակվում է պատմություն նշանակող համանման այլ հասկացություններից, ինչպիսիք են story-ն և history-ն, և հանդիսանում է ինքնուրույն տերմին, ուստի հետագա շարադրանքում կկիրառվի առանց թարգմանվելու:

են նաև բանասիրական մոտեցումները և, բնականաբար, առանցք կազմող բուն հոգեբանական հայեցակարգերը:

Նարատիվի փիլիսոփայական հիմքերի վերլուծությունը սկսվում է Արիստոտելից: Ինչպես ճիշտ նկատում է Ջ.Բրունները, նարատիվների էության գիտակցման, նրանց օգտագործման վարպետությանն առավել խորքային է մոտեցել Արիստոտելն իր «Պոետիկա» երկում: Բրունները նշում է, որ Արիստոտելին «հիմնականում հետաքրքրում էր, թե գրականությունն ինչպես է «նմանակում» կյանքը, այսինքն՝ միմեզիսի թեման» [11, էջ 109]:

Նարատիվ մոտեցման զարգացման ու գիտության մեջ ներմուծման ուղղություններից էին Վ. Պրոպի բանահյուսական հետազոտությունները: Ջ. Բրունների իրավացի նկատառմամբ՝ «հենց Պրոպը հետհեղափոխական Ռուսաստանում գիտության տեսադաշտ վերադարձրեց նարատիվների թեման: Լինելով բանահյուսության հետազոտող և ռուս լեզվաբանության մեջ ձևաբանության նոր ուղղությունների հետևորդ՝ նա, այնուամենայնիվ, կարծում էր, որ պատմողական ձևի կառուցվածքը ոչ միայն շարահյուսական խնդիր է, այլև արտացոլում է մարդկանց՝ կյանքում անհետևողականությունն ու անսպասելիությունը հասկանալու ձգտումները: Նա համաշխարհային բանահյուսության մեջ արտացոլվող համընդհանուր կառույցներ էր փնտրում այնպես, ինչպես իր ժամանակակից լեզվաբաններն էին քերականական ընդհանրություններ փնտրում: Վ. Պրոպը լիարժեքորեն արժանի է նարատիվի ժամանակակից ուսումնասիրման նախաձեռնողի պատվին» [նույն տեղում, էջ 109-110]: Տվյալ մոտեցումը միանշանակ ընդգծում է լեզվաբանական ակունքների նշանակությունը նարատիվ ավանդույթի ձևավորման գործում: Փորձարարական հոգեբանության հիմնադիր Վ. Վունդտն իր առաջին՝ «Ազգերի հոգեբանություն» (1916) աշխատությունում ևս անդրադառնում է լեզվի վերլուծությանը: Վ. Վունդտը քննարկում է տարբեր ազգերի հոգեկերտվածքի ձևավորման գործում լեզվի ունեցած դերը և եզրակացնում, որ լեզվաբանական առանձնահատկությունները, բառապաշարը և քերականական կառուցվածքն ազդում են հոգեկան կառույցների ձևավորման վրա [3]: Այս մոտեցմամբ լեզուն դիտարկվում է որպես օբյեկտի մշակութային ձև, որի միջոցով կարող է մեկնաբանվել հոգեբանությունը, թեև այդ դեպքում հնարավորություն չկա էմպիրիկ ճանապարհով ստուգելու լեզվաբանական տվյալների և հոգեբանական երևույթների միջև կապը: Գործնականում հնարավոր չէ ուսումնասիրել նաև կոլեկտիվ ինքնության և այդ կոլեկտիվը կազմող առանձին մարդկանց հոգեկան գործընթացների միջև հարաբերությունները:

Կյանքի պատմությունների ուսումնասիրությունը սկսվել է 19-րդ դարում մարդաբանության մեջ՝ ինդուկտիվ մեթոդի կիրառմամբ, որով

ընդհանրացվում էին կյանքի որոշ ոլորտներ: Հոգեբանության մեջ կյանքի պատմությունների ուսումնասիրությունը նույնպես սկսվել է ինդուկտիվ մեթոդով: Շ. Բյուլերը 1933 թվականին հրատարակեց իր «Մարդու կյանքի ուղին որպես հոգեբանական խնդիր» աշխատանքը [13], որից հետո նման հետազոտությունները շարունակվեցին Է. Ֆրենկել-Բրանսվիկի կողմից [16]: 1930-ականներին Հ. Մյուրեյը, իսկ հետագայում՝ Գ. Օլպորտը նույնպես անդրադարձան ինքնակենսագրությունների խնդրին: Հեղինակներն իրենց աշխատանքներում դուրս եկան նկարագրողական ընդհանրացումների սահմաններից՝ ինքնակենսագրություններին տալով ախտանշանային իմաստ անձի զարգացման և ամբողջականացման տեսանկյունից: Ինչպես Հ. Մյուրեյը, այնպես էլ Գ. Օլպորտը կարծում էին, որ ներքին հետևողականությունն ու հավասարակշռված կյանքի պատմությունը հոգեկան առողջության կարևոր ցուցանիշներ են [7, 25]: Նշենք, որ անձի զարգացումն ուսումնասիրելու նպատակով կենսագրական նարատիվն օգտագործելը առաջիններից մեկը կիրառել է Հ. Մյուրեյը:

«Նարատիվ հոգեբանություն» տերմինը ներմուծել է Թեոդոր Սարբինն իր համանուն աշխատությունում [29]: Նա նարատիվ ինքնությունը սահմանում է որպես առանցքային փոխաբերություն (root metaphor) հոգեբանության համար: Թ. Սարբինի կարծիքով՝ փոխաբերության վերլուծությունը հատկապես անհրաժեշտ է որակական հետազոտություններ անցկացնելիս: Նույն թվականին մեկ այլ հոգեբան՝ Ջ. Բրուները, իր «Իրական միտք: Հնարավոր աշխարհներ» (Actual Minds. Possible Words) գրքում գրում է, որ «ճանաչողության նարատիվ ձևն» առավել էմպիրիկ է: Ըստ նրա՝ անձի զարգացման հիմնական, գլխավոր պայմանը նրա կենսագրական պատմությունները կամ նարատիվներն են, այլ ոչ թե մտածողության ձևը, ինչպես ընդունված է կարծել դասական հոգեբանության մեջ [9]:

Մոտավորապես նույն ժամանակաշրջանում Դ. ՄաքԱդամսը [21] զարգացնում է կյանքի պատմությունների կոդավորման համար տեսական հիմքեր ու համակարգեր, իսկ կյանքի պատմությունները հասկանալը դառնում է հոգեբանության հիմնական գիտական ուղղությունների ուսումնասիրման նպատակներից մեկը: Այսպես, օրինակ, պատմվածքի այնպիսի լեզվաբանական հատկություններ, ինչպիսիք են կառուցվածքը, բառերի ընտրությունը, անձի հոգեբանության և սոցիալական հոգեբանության ուսումնասիրության առարկա են դարձել [8, 34]: Այսպիսով, գիտական նարատիվ հոգեբանությունը նոր հեռանկարներ է բացում այնպիսի համալիր երևույթների ուսումնասիրման համար, ինչպիսիք են անձի մշակութային և էվոլյուցիոն կողմերը, անձնային և սոցիալական ինքնությունը, անձը և խմբային դինամիկան:

Նարատիվ մոտեցումը կիրառվել է նաև հոգեթերապիայում: Առաջին անգամ այն այդ նպատակով կիրառել են Մ. Ուայթը և Դ. Էփստոնը, որոնք կարծում են, որ յուրաքանչյուր անհատական պատմություն կարող է վերանայվել և վերապատմվել: Վերանայման գործընթացում հեղինակը (այցելուն) կարող է փոխել պատմությունը, ավելացնել կամ պակասեցնել մանրամասներ և կյանքի պատմության ամբողջ «կտորներ»: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս նորից գրել սեփական կյանքի պատմությունը՝ դրանով փոխելով ոչ միայն անցյալը, այլև, որ հատկապես կարևոր է, շտկել ներկան և կառուցել ապագան [35]: Բնական է, որ այս բոլոր գործընթացներում ներգրավված են մարդու ինքնությունը, ես-կոնցեպցիան, որն այս դեպքում կարելի է անվանել նարատիվ (պատմվածք):

Որոշ գիտնականներ շեշտում են կյանքի պատմության ամբողջական ընկալման դերը որպես թերապևտիկ մեթոդ՝ մարդու կյանքի որակական փոփոխություն ապահովելու համար: Ռ. Բաթլերի ենթադրությունների համաձայն՝ ամբողջացված կյանքի պատմություն կառուցելը ծերության փուլում մարդու հոգեբանական ցանկալի վիճակի արդյունքն է [12]: Մ. Հանթը և Բ. Հանթը ցույց տվեցին, որ ամուսնության և հաջորդող ամուսնալուծության փաստերի կապակցված կենսագրության կառուցումը կարևոր նախադրյալ է ամուսնալուծության դեպքում հուզական լարվածությունը հանելու համար [20]: Թ. Ռեյները և Ի. Պրոգոֆը, վերլուծելով անձնական օրագրերը, դուրս բերեցին նարատիվների գործառութային նշանակությունը հուզական լարվածությունը նվազեցնելու և ինքնության մակարդակում ներդաշնակության հասնելու գործում [26, 27]:

Այսպիսով, հոգեբանության մեջ նարատիվը մարդու ինքնաբացահայտման միջոցներից մեկն է: Ընդհանուր առմամբ, նարատիվները հիմնականում իրադարձությունների թվարկումներ են, որոնց միջև կան ժամանակային կամ պատճառական կապեր [19]: Հոգեբանական տեսանկյունից մարդը, ներկայացնելով իր կյանքը, պատմություն պատմելով իր կյանքի մասին, կառուցելով իր կենսագրությունը, գնահատում է սեփական բնավորությունն ու իրեն ամբողջությամբ, միևնույն ժամանակ հիմնվում է համընդհանուր նորմերի ու կանոնների, որոշ բարոյական դիրքորոշումների վրա, որի արդյունքում, ըստ էության, կատարում է իր կյանքի կառուցվածքային ռեֆլեքսիան, այլ ոչ թե ուղղակի ինքնավերլուծություն: Նարատիվ ռեֆլեքսիան ենթադրում է ոչ միայն անցած իրադարձությունների վերարտադրում, այլև դրանց վերլուծություն՝ սուբյեկտի կյանքի ընթացքի վրա ազդեցության տեսանկյունից, շրջադարձային կետերի իմաստավորում, ինչպես նաև ներքին ռեսուրսների ինքնավերլուծություն:

Իրականության նարատիվ կառուցումը

Ինչպես արդեն նշվել է, նարատիվը ժամանակի մեջ կառուցված պատմվածք է: Նարատիվը՝ որպես պատմության կառուցում, ենթադրում է «սյուժետավորում», քանի որ պատմելով պատմությունը՝ մարդը ոչ միայն հնչեցնում է այն, այլև վերապրում: Կյանքն, ըստ էության, ինքնին «նարատիվային» է, սակայն թաքնված է յուրաքանչյուր մարդու խորքում, մակերեսային չէ և չի արտահայտվում սոցիումում: Ջ. Բրուները կարծում է, որ չկա «ապրած և ներկայում ապրվող ժամանակի» նկարագրության այլ միջոց, քան նարատիվը: «Նարատիվը նմանակում է կյանքը, իսկ կյանքը նմանակում է նարատիվը: Կյանքն այդ իմաստով, ինչպես և նարատիվը, մարդու երևակայության արդյունքն է» [1, էջ 11]: Ջ. Բրուների առաջ քաշած երկրորդ թեզիսն այն է, որ նարատիվը միշտ ռեֆլեքսիվ է: Երրորդ թեզիսն այն է, որ նարատիվը միշտ ներկայանում է գրական ձևի մեջ՝ որպես ինքնակենսագրություն: Առաջ քաշած թեզիսների հաստատման համար Ջ. Բրուները վերլուծել է մի ընտանիքի անդամների նարատիվները՝ բացահայտելու, թե «ինչպես են կյանքի պատմությունները կապակցվում մեկը մյուսին» [նույն տեղում, էջ 19]: Նա վերլուծել է ընտանիքի անդամների նարատիվները ձևի և բովանդակության տեսանկյունից և եկել այն եզրակացության, որ ընտանիքի բոլոր անդամներն ունեն որոշակի ընդհանուր հիմնական, ֆորմալ կառույցներ, որոնցով հնարավոր է ընտանիքի ընդհանուր դիսկուրսի հիման վրա կառուցել սեփական անձն ու փորձը, ինչը պահպանվում է ինչպես ծնողների, այնպես էլ երեխաների մեջ [նույն տեղում]:

Իրականության նարատիվ կառուցման խնդրի վերլուծությանն անդրադառնալով՝ Ջ. Բրուները ձևակերպում է մի քանի հարց. առաջին հերթին, թե ինչպիսին են նարատիվի՝ որպես աշխարհի պատկեր կառուցելու գործիքի, հնարավորությունները, երկրորդ հերթին՝ սահմանափակվում է արդյոք նարատիվը միայն կոնկրետ դեպքերի յուրահատուկ կողմերը մատնանշելով, թե այն արտահայտում է նաև կառուցվող իրականության որոշ համընդհանուր հատկություններ: Առաջին հարցին պատասխանելով՝ Ջ. Բրուները հաստատում է այն փաստը, որ, չնայած գիտական մեթոդն օբյեկտիվություն, հավաստիություն է պահանջում, այնուամենայնիվ, նարատիվը՝ որպես հետազոտական գործիք, հնարավորություն է տալիս դուրս բերել մարդկանց միջև փոխհարաբերությունների հիմնական սկզբունքները, մարդու կողմից դրվող նպատակները, մեկնաբանել ասվածի իմաստը և այլն: Ինչպես իրավամբ նշել է Ջ. Բրուները, գոյություն ունի հոգեբանական տիրույթի երկու տիպ կամ, ինչպես հեղինակն է նշում, «գործողության երկու լանդշաֆտ», որոնք միաժամանակ առաջանում են պատմվածքում և, իրենց հերթին, վերականգնում են տվյալ յուրահատուկ

իրադարձության և անցյալում ու ապագայում այլ նման իրադարձությունների միջև կապը: Երկրորդ հարցին պատասխանելով՝ հեղինակն ընդգծում է, որ նարատիվին անդրադարձը միշտ կապված է սոցիումի կյանքը բնութագրող հիմնարար կատեգորիաների օգտագործման հետ: Այս նպատակով Ջ. Բրունները դիտարկում է այդպիսի ինը կատեգորիա, որոնք պարտադիր առկա են ցանկացած նարատիվի նկարագրություններում [2].

1. *Ժամանակի յուրահատուկ կառուցվածք:* Էությունն այն է, որ նարատիվը ժամանակի բաժանումն իրականացնում է ըստ կարևոր իրադարձությունների:
2. *Ընդհանուրը մասնավորի միջոցով:* Իրենց պատմվածքներում մարդիկ, որպես կանոն, մանրամասնորեն փոխանցում են այն, ինչն իրենց համար առավել նշանակալի է, այլապես պատմվածքն ինքնանպատակ կդառնա, ինչն արդեն նարացիա չէ դասական իմաստով:
3. *Արարքների դրդապատճառայնություն:* Ցանկացած պատմվածքում միշտ առկա են պահանջմունքներ, ձգտումներ, դրդապատճառներ, գնահատականներ և այլ ինտենցիոնալ վիճակներ, որոնք հետազոտողին տեղեկատվություն են հաղորդում մարդու այս կամ այն արարքի իրական պատճառների մասին:
4. *Հերմենևտիկ կոմպոզիցիա:* Էությունն այն է, որ միշտ պետք է հաշվի առնել մեկնաբանության հարցը. ոչ մի պնդում չի կարող միանշանակորեն մեկնաբանվել և պետք է ենթարկվի հերմենևտիկ վերլուծության:
5. *Իմպլիցիտ կանոնակարգում (имплицитная каноничность):* Նարատիվով ստեղծված իրականությունը ներքուստ խորապես կապված է իրերի սովորական, սպասելի կարգի հետ: Սակայն այս կապը, որպես կանոն, ուղղակի չէ, քանի որ այդ դեպքում կանոնակարգված նորմերին լիարժեք համապատասխանությունը կարող է ձանձրալի լինել: Այդ պատճառով նարացիաները միշտ իրական պատկերից ինչ-որ չափով շեղվում են:
6. *Հղման (ռեֆերենտության) բազմանշանակություն:* Նարատիվ վերլուծության հիմնադրույթներից մեկն է և ենթադրում է, որ նարատիվի վերլուծությունը պետք է ոչ թե պարզապես հիմնվի միայն բառերի վերլուծության վրա, այլ առաջին հերթին ելնի համատեքստից:
7. *Ընդհարումը՝ որպես նարատիվի կենտրոնական տարր:* Յուրաքանչյուր պատմության հիմքում ընկած է որոշակի ներքին ընդհարում, որի իմաստը որոշ նորմերի խախտումն է: Այդ խախտումները հաճախ դառնում են տարբեր մեկնաբանությունների ընդհարման հիմք: Այնուամենայնիվ, նարատիվը միշտ հիմնված է կայուն արքետիպերի

վրա և հաճախ վերարտադրում է դրանք, սակայն տարբեր սոցիալական, պատմական և մշակութային համատեքստում: Այդ պատճառով նարատիվի «ընթերցումը» կարող է փոխվել մշակութային ու պատմական պայմաններից կախված:

8. *Կարծիքների համաձայնեցվածության հնարավորություն:* Ցանկացած պատմվածք միշտ կարելի է «վերապատմել», և դրանում է նարատիվի՝ որպես թերապևտիկ մեթոդի, ուժը՝ կառուցելու և վերակառուցել իրականությունը:
9. *Նարատիվի պատմական բաղադրիչ:* Այս թեզիսը, մեր կարծիքով, հարում է ինքնության անընդհատության խնդրին: Էությունն այն է, որ նարատիվում մարդը ձգտում է «միացնել» հաճախ չմիացվող մասերը, ինչը նրան անընդհատության ու կայունության զգացում է տալիս: Բրուները կարծում է, որ մարդու հաջորդականության կառուցման ընդունակությունն արտացոլում է որոշակի ներքին անհրաժեշտություն:

Ջ. Բրուների հայեցակարգում մեկ այլ կարևոր դրույթ է այն, որ հեղինակն առանձնացնում է պարադիգմալ և նարատիվ մտածողություն: Մտածողության պարադիգմալ կամ տրամաբանական-գիտական ձևի դեպքում ղեկավարող սկզբունք են փաստարկման տրամաբանական կանոնները: Այդ կանոնները հնարավորություն են տալիս ընդհանուր տրամաբանական համակարգի շրջանակներում արդարացված եզրակացություններ անել: Նարատիվ մտածողության դեպքում գլխավորը ոչ թե ճշմարտությունն է, այլ «կենսականությունը» («vitality») [9, էջ 11]: Մարդը ձգտում է ստեղծել համաձայնեցված, իրական պատմություն ինչ-որ իրադարձության մասին: Այդպիսով, մտածողության հիմնարար ձև է դիտարկվում պատմողականը, որը որակապես տարբերվում է տրամաբանական դատողությունից: Ջ. Բրուները նշում է, որ կոգնիտիվ հոգեբանությունը չափազանց շատ է ուշադրություն դարձնում տրամաբանական գիտելիքների ուսումնասիրմանը՝ անտեսելով նարատիվ գործընթացների համատեքստը, որի միջոցով մարդն իմաստավորում է իր «ես»-ը [10]:

Մարդու մտածողության նարատիվ բնույթը դրսևորվում է հիշողության և կոգնիտիվ գործընթացների մոդելավորմամբ: Ռ. Շենկը և Ռ. Աբելսոնը գրում են, որ մարդկության ողջ գիտելիքները հիմնվում են նախկին պատմությունների վրա [30]: Այս իմաստով սերնդեսերունդ փոխանցվող լեգենդներն ու առասպելները ոչ միայն մշակույթի առանձնահատկությունների, աշխարհագրության, հասարակության ճանաչողության, այլև այդ ժամանակաշրջանի անձի մասին գիտելիքների փոխանցման և վերարտադրման կարևոր գործիքներ են: Այսպես, օրինակ, հիմնվելով նարացիաների վրա՝ Ե. Բ. Ստարովոյտենկոն ներկայացնում է անձի տիպաբանություն, ինչպես նաև նկարագրում է տեքստի տիպեր և գործառույթներ՝ կախված մշակույթի

անձնավորման (պերսոնալիզացիայի) ուղղվածությունից [4]: Հեղինակն առանձնացնում է տեքստի հինգ հիմնական տիպ և գործառույթ.

1. Տեքստ, որը ներկայացնում է հեղինակի ինքնիրականացման յուրահատուկ ձև, որտեղ այդ ինքնիրականացումը ծավալվում է որպես անհատական կյանքի յուրատիպ իմաստավորում և ամրագրում:
2. Տեքստը որպես անձի «ես»: Դրսևորվում է որպես հեղինակի ռեֆլեքսիայի ընդունակություն, հնարավորություն է տալիս գիտակցելու սեփական բազմակիությունն ու հակասությունները:
3. Տեքստը դրսևորվում է իբրև «հնարավոր անձ և նրա հնարավոր կյանք» [նույն տեղում, էջ 21], հերոսի կենսաձևը կառուցում է անձը, և այս դեպքում խոսքը հիմնականում գրական ստեղծագործության մասին է:
4. Տեքստի գրավոր շարադրումը՝ որպես անձնական կյանքն ապրելու ձև, դիտարկվում է, երբ տեքստը դառնում է կյանքի շարունակություն «տեքստային չափման մեջ» [նույն տեղում]:
5. Տեքստը՝ որպես մարդու ստեղծագործության աղբյուր: Դիտվում է այն դեպքերում, երբ տեքստը դառնում է ընթերցողի համար աշխարհաճանաչման և ինքնաճանաչման նոր մոդելների կառուցման հիմք, ինչպես նաև հիմք բանասիրության, լեզվաբանության և հոգեբանության ոլորտներում գիտական հետազոտությունների համար: Ըստ Ե. Բ. Ստարովոյտենկոյի՝ ժամանակակից անձի հոգեբանությունը գրական տեքստերում լայն հորիզոններ է բացում՝ դրա օգտագործման նոր ուղիներ գտնելով անհատի ճանաչման և ինքնաճանաչման հարցում:

Նարատիվ հարցազրույցի մեթոդը

Սոցիոլոգիական բառարանում նարատիվ հարցազրույցի մեթոդը «հիմնված է կյանքի պատմության՝ որպես սոցիալական կառույցի վրա, որն ընդգրկում է ինչպես սոցիալական իրականությունը, այնպես էլ այն աշխարհը, որը վերապրում է սուբյեկտը: Ըստ որում, կյանքի պատմությունները, որոնք ըմբռնվում են որպես կոնստրուկտներ, չեն տարանջատվում փոխգործողության (ինտերակցիոն) գործընթացներից» [5]:

Նարատիվ հարցազրույցի մեթոդի ի հայտ գալու նախադրյալ է այն պատկերացումը, որ մարդն ինտուիտիվ ձևով գիտի, թե ինչ կանոններով է կառուցվում լսողի համար հասկանալի պատմվածքը: Քանի որ պատմելու ժամանակը միշտ սահմանափակ է, պատմողը կարող է հետևել «խտացման» կանոնին և, ընտրելով ինֆորմացիան, անդրադառնալ միայն իր կյանքի այն պահերին, որոնք կարևոր է համարում: Պատմողի՝ իր պատմությունն ամբողջականացնելու և ավարտուն դարձնելու ձգտումը դրդում է նրան ավարտել

պատմվածքի յուրաքանչյուր դրվագը: Դա նպաստում է, որ հետազոտողը պատկերացում կազմի պատմողի «գեշտալտի» մասին:

Առաջին անգամ նարատիվ հարցազրույցի ժամանակակից հայեցակարգը ներկայացրեց Ֆ. Շյուցեն, որը բանավոր պատմությունները տեղեկատվության փոխանցման ամենատարածված միջոցն էր համարում, իսկ գիտական նպատակներով դրանց կիրառումը բավական հեռանկարային էր դիտարկում: Ֆ. Շյուցեն նարատիվ հարցազրույցի վերլուծության մեջ մի քանի կարևոր կատեգորիա մտցրեց: Նա, առաջին հերթին, մշակեց կյանքի ընթացքի «գործընթացային կառույցների» և կյանքի ընթացքի ձևերի հայեցակետերը [32]: Գործընթացային կառույցները կյանքի ընթացքի փաստացի ձևերն են, որ դուրս են բերվում պատմողի կողմից իր կենսագրության մեկնաբանման համատեքստում: Ֆ. Շյուցեն առանձնացնում է հետևյալ գործընթացային կառույցները. *ինտենցիոնալ գործընթացներ, ինստիտուցիոնալ նմուշների փոխանցման գործընթացներ, կյանքի ընթացքի կորեր*: Ինտենցիոնալ գործընթացները կանխամտածված կերպով սկսված գործողություններն են, որոնք կապված են կյանքում նպատակադրման հետ: Ինստիտուցիոնալ նմուշների փոխանցումը ենթադրում է կյանքում հաջորդականությունների որոշակի կանոնների փոխանցում, ինչպիսին, օրինակ, դպրոց գնալն է, ընտանիք կազմելը, մասնագիտական աճը և այլն: Կոր ընթացքները ենթադրում են այնպիսի իրադարձությունների ընթացք, որոնք էականորեն սահմանափակում են մարդուն: Օրինակ, դա կարող է լինել իրադարձությունների շղթա, որոնց արդյունքում մարդը դառնում է հարբեցող, այսինքն՝ կորցնում է զարգացման հնարավորությունը: Դրա հետ մեկտեղ, յուրաքանչյուր մարդու կյանքում առաջանում են ընտրության հնարավորություններ, երբ ինքն է ընտրում, թե ինչ ճանապարհով գնա: Եվ այս դեպքում կարևոր է, որ անձի ինքնությունը «շարժվի» ոչ այն ուղղությամբ, որով ընթանում են կյանքի գործընթացային կառույցները [նույն տեղում]:

Շյուցեի կողմից այլ կարևոր ներմուծումներ են «կոգնիտիվ կառույցներ» հասկացությունը և ինքնաբուխ/հանպատրաստից ինքնակենսագրական պատմության «կոգնիտիվ ֆիգուրների» հայեցակետը [նույն տեղում]: Այցելուների ինքնաբուխ պատմությունների բովանդակային վերլուծությունը հնարավորություն տվեց Ֆ. Շյուցեին առանձնացնել հետևյալ «կոգնիտիվ ֆիգուրները». *1. պատմողի՝ որպես կենսագրության կրողի պատկերացումները, 2. իրադարձության տեղի, ժամանակի և պայմանների մասին ինֆորմացիա, 3. ձեռք բերված փորձի և իրադարձությունների շղթա, որոնք պատմողը ներկայացնում է իր ապրումների հիման վրա, 4. հեղինակի՝ իր ապրելու կանոնների սահմանում, 5. ինքնակենսագրական «գեշտալտ-փորձի» փոխանցում, որը դրսևորվում է պատմության և դրան տրվող գնահատականի*

փոխկապակցվածությամբ: Պատմելու ընթացքում պատմության «միջուկի» երևան գալուն զուգահեռ ուղիղ կամ միջնորդավորված ձևով մշտապես ուրվագծվում է նաև ֆոնը, որը միշտ կապված է գործողությունների վայրի, իրադարձության մասնակիցների տարածական և հուզական բաղադրիչների հետ: Տվյալ տարրերն անգիտակցական չեն, քանի որ անհրաժեշտության դեպքում միշտ կարող են դուրս բերվել որպես կոգնիտիվ ֆիգուր: Սակայն, քանի որ դրանք դեռ «ֆոնի» վիճակում են և մինչև վերջ չեն գիտակցվում, պատմողի մարմնական ու հուզական դրսևորումներն ավելի շատ տեղեկություն են տալիս այդ ֆոնի մասին, քան պատմությունն ինքնին: Ֆ. Շյուցեն կարծում է, որ անցյալի հուզական ու վարքային բաղադրիչների վերակառուցման մեթոդական բանալին ներկայի մեջ դրանք ներառելու և վերակառուցելու՝ հեղինակի ընդունակությունն է [նույն տեղում]:

Ֆ. Շյուցեի նարատիվ հարցազրույցի հայեցակարգը՝ որպես կենսագրական հետազոտության մեթոդ, զարգացում ստացավ տարբեր հետազոտողների, մասնավորապես, Գ. Ռոզենտալի կողմից [28]: Ըստ Ռոզենտալի՝ կենսագրական նարատիվ հարցազրույցի նպատակն այնպիսի տեքստի ստացումն է, որը կծառայի կյանքի ընթացիկ իրադարձությունների և դրանց ժամանակագրական հաջորդականության վերակառուցմանն ինչպես ողջ կենսագրության, այնպես էլ առանձին իրադարձությունների նշանակության տեսակետից: Ռոզենտալը կարծում է, որ պատմվածքի (դեպքի) կառուցվածքը փոխել, վերակառուցել հնարավոր է, եթե պատմողին առաջարկվի դիտարկել տվյալ իրավիճակում իր համար պոտենցիալ առումով հասանելի այլընտրանքային հնարավորություններ: Ռոզենտալը կենսագրությունը դիտարկում է որպես սոցիալական կառույց, որը ներառում է ինչպես սոցիալական իրականությունը, այնպես էլ սուբյեկտի կողմից ապրվող աշխարհը: Ընդհանուր կենսագրական կառույցի վերլուծության օգնությամբ նա ցույց է տալիս կյանքի պատմվածքից (lifestory) կյանքի պատմության (life history) վերակառուցման ուղին [28]: Մ. Չիքսենտմիհային և Օ. Բիթին ընդլայնեցին կենսագրական մոտեցումը՝ ներառելով ոչ միայն անցյալը, այլև ներկան ու ապագան և ուշադրությունը կենտրոնացնելով ամբողջ կյանքի ընթացքում անձի զարգացման տրամաբանական հաջորդական իրադարձությունների էվոլյուցիային [14]:

Ժամանակակից հոգեբանության մեջ նարատիվ հարցազրույցն օգտագործվում է անձի և նրա զարգացման ավելի խորքային գործընթացների, այն է՝ անձնային միֆի, ես-ի և ինքնության կառուցումն ըմբռնելու, ինչպես նաև այցելուների հոգեբանական խնդիրներն ախտորոշելու համար: Նարատիվ հարցազրույցն իբրև հիմնական մեթոդ օգտագործող հոգեթերապևտները զարգացնում են հոգեբանության ժամանակակից ուղղություն՝ նարատիվ հոգեթերապիա [18, 35]:

Ինքնակենսագրությունների վերլուծության մոդելն ըստ Դ. ՄաքԱդամսի

Դ. ՄաքԱդամսի [21, 22, 23] նարատիվ ինքնության տեսությունը, որում համադրվում է Է. Էրիքսոնի՝ հոգեսոցիալական զարգացման տեսությունը և հեղինակի սեփական վերլուծությունը՝ հիմնված Լ. Այսբրիի և Ն. Ֆրայի և կենսագրական պատմությունների նարատիվ տիպաբանության վրա, առաջ է քաշում ստուգման ենթակա մի քանի վարկած անձի նորմալ և ոչ նորմալ զարգացման վերաբերյալ [15, 17]: Այս մոդելը չի հավակնում ընդգրկել անձն ամբողջությամբ, այլ փոխարենը շեշտը դնում է ինքնության հարցի վրա՝ վերջինս նույնացնելով կենսագրական պատումի (նարատիվի) հետ: Դ. ՄաքԱդամսն իր տեսության մեջ ուսումնասիրում է այն բաղադրատարրերը, փոփոխվող գործոնները և ֆորմալ ցուցանիշները, որոնց հիման վրա կարելի է եզրահանգումներ անել անձի մասին նրա վիճակի, հասունության և ամբողջականության առումներով:

Ըստ Դ. ՄաքԱդամսի, մարդը կազմակերպում է իր ինքնությունը վերբալ (խոսքային) նարատիվի միջոցով, որը «անձնական միֆ» է, և որը ձևավորվում է դեռահասության տարիքում ու վերանայվում է ողջ հետագա կյանքի ընթացքում: Նարատիվի լավատեսական կամ հոռետեսական ուղղվածությունը հիմնվում է անձի վաղ կապվածությունների վրա: Անձնային ինքնությունը կառուցվում է կյանքի տարբեր դրվագների միջոցով, որոնք Դ. ՄաքԱդամսն անվանում է միջուկային: Այս դրվագներն ընտրողաբար վերցվում են անձի կենսագրական հիշողության մեջ զետեղված իրադարձություններից: «Պատանեկությունից սկսած՝ մենք մեր ներկայում ընտրում ենք, թե ինչպես հիշենք անցյալը» [22, էջ 169]: Այդուհանդերձ, Դ. ՄաքԱդամսն ընդգծում է, որ անձնական պատմությունը հորինվածք չէ, այլ ավելի շուտ՝ անցյալի համաձայնեցված և իրատեսական նկարագրություն ստեղծելու փորձ, որը կներառի «քիչ թե շատ ստուգված փաստեր» [նույն տեղում]: Դ. ՄաքԱդամսի էմպիրիկ աշխատանքները նվիրված են այն բանին, թե ինչպես է մարդն ինտեգրում իր «ես»-ի զանազան, բազմակի ասպեկտները (օրինակ՝ պերսոնաժները) մեկ միասնական կյանքի պատմության մեջ: Նա անցկացրել է մեծահասակների կյանքի պատմությունների մի շարք հետազոտություններ՝ կիրառելով ԹԱԹ-ը (թեմատիկ ապերցեպցիայի թեստը) «իշխանության» և «մտերմության» մոտիվները գնահատելու համար: Դ. ՄաքԱդամսը կյանքի պատմությունները վերլուծելիս առանձնացնում է «ես»-ի զանազան, հարաբերականորեն ինքնուրույն ասպեկտներ, որը նա անվանում է «իմագո»-ներ (imago): Սրանք «պերսոնաժներ» են, որոնք կարող են համագործակցել միմյանց հետ, բայց երբեմն նաև բախվել: Մեկ միասնական պերսոնաժում, կազմակերպված

միասնական կառույցում այս «իմագոների» ինտեգրումը Դ. ՄաքԱդամսը դիտարկում է որպես մեծանալու, հասունանալու հետ կապված անհրաժեշտ գործընթաց:

Համաձայն Դ. ՄաքԱդամսի՝ կյանքի պատմությունները ոչ այլ ինչ են, քան ներքնայնացված և զարգացող նարատիվներ, որոնք մարդիկ կառուցում են իրենց կյանքը ժամանակային համատեքստում իմաստավորելու համար: Հեղինակը գրում է, որ այդ նարատիվները ներկայացվում են ոչ միայն որպես անձնային, այլև որպես մշակութային տեքստեր, որոնցում արտացոլվում են ժամանակակից կյանքի զանազան կողմեր, դասակարգային և գենդերային կատեգորիաներ, քաղաքական և տնտեսական ուժեր, կրոնական ավանդույթներ, պատմություն, ժողովրդական բանահյուսություն և այլն: Դ. ՄաքԱդամսի հայեցակարգի էությունն այն է, որ չնայած այն հանգամանքին, որ մշակույթն, անպատճառ, կարևոր գործոն է կյանքի պատմության կերտման մեջ, սակայն անձը մշակույթի ազդեցության պասիվ ընդունողը (recipient) չէ, այլ իր հերթին փոխակերպում է այն: Այսպիսով, կյանքի պատմությունները հարկ է դիտարկել որպես հոգեսոցիալական կառույցներ, որոնց, ինչպես և ողջ սոցիալական աշխարհի, ստեղծողն ինքը՝ անձն է [23, 24]: Մարդն ապրում է իր ստեղծած պատմություններով և անմիջականորեն դրանցում: Անձի կենսական պատմությունը կարող է ներառել փոքր պատմություններ, որոնք պատմվում են տարբեր դիրքերից և տեսանկյուններից: Երբեմն այդ առանձին պատմություններն անգամ կարող են կոնֆլիկտի մեջ մտնել միմյանց հետ, քանի որ պարունակում և արտացոլում են ինչպես բուն անձնային, այնպես էլ սոցիալական տարրեր: Այդուհանդերձ, ուշադիր հայացքի ներքո ակնհայտ է դառնում, որ անգամ փոխբացառող պատմությունները պարունակում են ընդհանուր նպատակի կորիզ և ունեն որոշակի իմաստային բեռնվածություն: Ինքը՝ պատմությունը պատմելու գործընթացը, մարդուն հնարավորություն է տալիս կյանքի տարբեր իրադարձությունները տեսնել միասնականության մեջ: Մարդիկ ապրում են իրենց պատմություններով և կարևորում դրանք: Ամեն կյանքի պատմություն եզակի, անկրկնելի է այն առումով, որ անկրկնելի կերպով ներառվում է ինքնին պատմողի որոշակի շրջանակների մեջ և արտացոլվում նրա պատմած տեքստում կամ համատեքստում: Կյանքի պատմություններն ուղղորդում են անձի վարքը, մասնակցում նրա մտքերի, մտորումների ձևավորմանը: Մարդու կյանքի պատմության վերլուծությունը թույլ է տալիս պարզել, թե ինչպես են մարդիկ ստեղծում իմաստներ իրենց կյանքում: Նշվածն, իր հերթին, վկայում է, որ կենսական պատմություններում կառուցվում է նաև անձի ինքնությունը, քանի որ կառուցելով կյանքի իր պատմությունը՝ մարդն անպայմանորեն

ինքն իրեն տալիս է այնպիսի հարցեր, ինչպիսիք են. «ի՞նչ է դա նշանակում ինձ համար», «իսկ դա ինձ ի՞նչ է տալիս», «ինչպե՞ս և ինչո՞ւ է սա տեղի ունենում», իսկ այս հարցերն այսպես թե այնպես՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն, միշտ բերում են սեփական ինքնության իմաստավորմանը:

Կյանքի պատմությունը կազմված է չորս հիմնական բաղադրիչներից. առանցքային դրվագներից, իմագոյից (imagos) աշխարհայացքից և գեներատիվության (generativity script) սցենարներից: Այս չորս բաղկացուցիչները համալրվում են թեմատիկ ուղղություններով և նարատիվ բարդությամբ: Թեմատիկ ուղղությունները կամ գծերը կենսագրության (կյանքի պատմության) բովանդակության կրկնվող տարրերն են: Ըստ ՄաքԱդամսի, պարբերաբար կրկնվող, կարևոր բովանդակային տարրերը կապված են լինում իշխանության դրդապատճառների և մտերիմ (ինտիմ) հարաբերությունների հետ:

Դ. ՄաքԱդամսը նարատիվի բարդությունը դիտարկում է որպես Ես-ի հասունության հայտանիշ: Հիմնական շեշտն այստեղ պատմության կառուցվածքի վրա է. պատմությունները միմյանցից տարբերվում են ոչ միայն ըստ բովանդակության, այլև ըստ բարդության (աստիճանի): Հարաբերականորեն պարզ պատմություններում շատ քիչ են կերպարները (պերսոնաժները), ինքը՝ սյուժեն, միագիծ է և ներառում է փոքր թվով բաղադրյալ սյուժեներ («ենթասյուժեներ»): Ի տարբերություն սրա, բարդ պատմությունները նրբին են և ներառում են շատ տարրեր, այսպես կոչված «միջուկային», առանցքային կյանքի դրվագներ և առանձնահատկություններ: Պատմողը մի շարք տարբեր կապեր է հաստատում այդ պատմության տարբեր տարրերի միջև՝ դրանք միավորելով հիերարխիկ կառուցվածքում: Այսպիսով, բարդության աստիճանը կարելի է դիտարկել որպես «զարգացման ինդեքս», որովհետև այն ցույց է տալիս, թե որքանով և ինչ ձևով է անձնական փորձը կապված իմաստի ինտեգրատիվ շրջանակի հետ: Զարգացման «պակաս հասուն» մակարդակում անձի իմաստների անհատական շրջանակները հարաբերականորեն պարզ են, և դրանցում կիրառվում է հստակ, «ամեն ինչ կամ ոչինչ» տիպի մոտեցում սեփական «ես»-ի և հասարակության ըմբռնմանը: «Հասուն» մակարդակի դեպքում իմաստների անհատական շրջանակները շատ նրբին են և հիերարխիկ կերպով ինտեգրված, նրանցում թույլատրելի են պարադոքսներ և հակասություններ, և այլ մարդկանց անհատականությանը վերաբերվում են ըմբռնումով և հարգանքով:

Իր նարատիվ մոդելում Դ. ՄաքԱդամսը նարատիվի սեմանտիկ (իմաստային) հարթությունում վերլուծում է հոգեբանական բովանդակությունները՝ հաշվի առնելով կյանքի պատմության բաղկացուցիչները կամ թեմատիկ ուղղությունները: Այսպիսի կոնտենտ-վերլուծությունը կարող է անցկացվել վերը նկարագրված՝ անձի նարատիվ մոդելի հասկացությունների կիրառմամբ (իմագոներ, կենտրոնական դրվագներ, թեմատիկ

ուղղություններ և այլն): Հատկանշական է, որ ՄաքԱդամսը կենսագրական պատմությունները համարում էր անձի հետազոտության էմպիրիկ կերպով վերահսկելի տվյալների աղբյուր, և հաստատում այդ գաղափարն անձի պրոյեկտիվ թեստի օգտագործման և անձի մոդելի հասկացությունների հիման վրա արված կոնտենտ-վերլուծության միջոցով:

Ամփոփում. նարատիվ հոգեբանության կիրառման հնարավորությունները

Նարատիվ հոգեբանությունը հետդասական, սոցիալ-կոնստրուկտիվիստական տեսության պրակտիկ կիրառումն է հոգեբանության մեջ:

Նարատիվ հոգեբանությունը կիրառական նոր հնարավորություն է բացում անձի հոգեբանության ոլորտում դիագնոստիկ և հոգեթերապևտիկ պրակտիկայի համար: Նարատիվ հարցազրույցի՝ որպես դիագնոստիկ մեթոդի, արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս ուսումնասիրել անձին իր անհատականության ամբողջության մեջ՝ դրանով իսկ նպաստելով իդեոգրաֆիկ և նոմոթետիկ վերլուծությունների համադրությանը: Նարատիվ հարցազրույցը՝ որպես թերապևտիկ միջոց, հնարավորություն է տալիս այցելուին փոխել իր անձնական պատմությունը՝ գիտակցելով, վերապատմելով և լայնացնելով սեփական նարատիվը:

Նարատիվ հոգեբանության շրջանակներում հնարավորություն է ստեղծվում դիտարկել անձին միաժամանակ իր անհատականության ունիվերսալ (նորմատիվ և ոչ նորմատիվ), մշակութային (մակրո- և միկրոհամատեքստային) և սուբյեկտիվ ապրված օրինաչափությունների համադրության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Брунер, Дж.** Жизнь как нарратив. Постнеклассическая психология. Социальный конструкционизм и нарративный подход. *Научно-практический журнал*, N 1(2), Москва, 2005, с.9-30.
2. **Брунер, Дж.** *Культура образования*, М., «Просвещение», 2006.
3. **Вундт, В.** Проблемы психологии народов. Лейпциг, 1911. Հասանելի է http://www.gumer.info/bibliotek_Buks/Sociolog/Wundt/_PsNar_Index.php
4. **Старовойтенко, Е.** *Культурная психология личности*. М., Акад. Проект, 2007.
5. Социология: Энциклопедия / Сост. А. Грицанов, В. Абушенко, Г. Евелькин, Г. Соколова, О. Терещенко, 2003. Հասանելի է http://voluntary.ru/dictionary/568
6. Энциклопедия постмодернизма. Сост. и научные редакторы А. Грицанов, М. Можейко. Հասանելի է http://www.niv.ru/doc/philosophy/encyclopedia-post-modern/index.htm
7. **Allport, G.** *Becoming: Basic considerations for a psychology of personality*, New Haven, CT, Yale University Press, 1955.
8. **Bobrow, D. and Collins, A.** (eds), *Representation and Understanding: Studies in cognitive science*. New York, Academics Press, 1975.

9. **Bruner, J.** *Actual Minds. Possible Words,* Cambridge. MA, Harvard University Press, 1986.
10. **Bruner, J.** *Acts of Meaning*, Cambridge, MA, Harvard University Press, 1990.
11. **Bruner, J.** *Making stories: Law, literature, life*, Cambridge, MA, Harvard University Press, *2002*.
12. **Butler, R.** The life review: An Interpretation of the reminiscence in the ages. *Psychiatry,* N 26, 1963, pp. 65-76.
13. **Bühler, C.** *Der menschliche Lebenslauf als psychologisches Problem* (The human Course of Life as a Psychological problem), Leipzig, Hirzel, 1933.
14. **Csíkszentmihályi, M. and Beattie, O.** Life themes: A theoretical and empirical exploitation of other origins and effects, *Journal of Humanistic Psychology,* N 19, 1979, pp. 46-53.
15. **Eisbree, L.** *The Rituals of Life: Patterns in narratives.* Port Washington, NY, Kennikat Press, 1982.
16. **Frenkel- Brunswick, E.** Studies in Biographical psychology. *Character and Personality*, N 5, 1936, pp. 1-35.
17. **Frye, N.** *Anatomy of Criticism*: *Four Essay*, Princeton, HJ, Princeton University Press, 1957.
18. **Gergen, K. and Gergen, M.** Narrative and the self as relationship, in L. Berkowitz (ed) *Advances in Experimental Social Psychology*, Vol. 21, San Diego, CA, Academic press, 1988, pp. 17-56.
19. **Hoshmand, L.** Narratology, cultural, psychology and counseling research, *Journal of Counseling Psychology,* 52 (2), 2005, pp. 178-186.
20. **Hunt, M. and Hunt, B.** *The Divorce Experience*, New York, New American Library, 1977.
21. **McAdams, D.** *Power, Intimacy and Life Story*: *Personological inquiries into Identity*, New York, Guilford Press, 1985.
22. **McAdams, D.** *The Stories We Live by: Personal Myths and the making of the self.* New York, William Morrow, 1993.
23. **McAdams, D.** A psychologist without a country or living two lives in the same story. Narrative identities: *Psychologists engaged in self-construction*, 2005, pp. 114-130.
24. **McAdams, D.** Personal narratives and the life story, in O. John, R. Robins & L. Pervin (eds), *Handbook of Personalty: Theory and research*, NY, London, Guilford Press, 2008, pp. 242-262.
25. **Murray, H.** *Exploration in Personality*, New York, Oxford University Press, 1938.
26. **Progoff, I.** *At a Journal Workshop*, New York, Dialogue House, 1975.
27. **Rainer, T.** *The New Diary*, Los Angeles, CA, J.P. Tarcher, 1978.
28. **Rosenthal, G.** Reconstruction of life stories: Principles of selection in generating stories for narrative biographical reviews, in R. Josselson, & A. Lieblich (eds), *The narrative study of lives*, Newbury Park, CA, Sage, 1993, pp. 59-91.
29. **Sarbin, T.** (ed), *Narrative Psychology: The storied nature of human existence*, New York, Praeger, 1986.
30. **Schank, R., Abelson, R.** Knowledge and memory: The real story, in R.S. Wyer (ed), *Knowledge and memory: The real story. Advances in social cognition,* Vol. 8, NY, London, Psychology Press, 1995, pp. 1-85.
31. **Schuetze, F.** Biographieforschung und narrahives Interview. *Neue Praxis*, N3, 1983, pp. 283-293.
32. **Schuetze, F.** Kognitive Figuren des autobiographischen Stehgreiferzaehlens, in Kohli, M. Robert, G. (eds), *Biographie und soziale Wirklichkeit. Neue Beitraege und Forschungsperspektiven*, Stutgart, 1984, pp. 78-117.
33. **Singer, J., Salovey, P.** *The Remembered Self: Emotion and memory in Personality.* New York, Free Press, 1993.
34. **Thorndyke, P.** Text and context: Exploration in the semantics and pragmatic of discourse. *Journal of Pragmatics* N 1, 1977, pp. 211-232.
35. **White, M., Epston, D.** *Narrative Means to Therapeutic Ends*, New York, W.W. Norton&Co, 1990.